հանդիսանում է ածանցված պահանջ և առաջին պահանջի մերժումն ինքնին հանգեցնում է նաև հետևանքի կիրառման պահանջի անհիմն լինելուն, ընդ որում Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից չեն ներկայացվել հիմնավորումներ առ այն, որ «ՍՈԼԻԴ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը վերացվելու պարագայում վերջինս հանդիսանում է երկրորդ առավելագույն միավոր հավաքած մասնակից, իսկ Պատասխանողի կողմից ներկայացված ապացույցներով և երրորդ անձի դիրքորոշումների համաձայն, այդպիսին կարող էր գնահատվել երրորդ անձը, սակայն՝ ոչ հայցվորը:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ հայցն ամբողջությամբ անհիմն է:

_

<u>6. Դատական ծախսեր.</u>

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանն արձանագրում է, որ հայցի մերժմամբ պայմանավորված դատական ծախսերը պետք է կրի հայցվոր կողմը, իսկ հաշվի առնելով պետական տուրքի նախապես վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/6173/02/24 քաղաքացիական գործով ըստ հայցի՝

«Արտդիանշին» ՍՊԸ-ի ընդդեմ պատասխանող ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքա-պետարանի, հայցվորի կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ «Մեդիսոն Էյբլ՝ ՍՊԸ-ի, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am